**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**

**ԵՐԵՎԱՆ  ՔԱՂԱՔԻ  ԱՎԱԳԱՆԻ**

«-- »  --------  թ.  №____-Ա

**Ո  Ր  Ո  Շ  Ո Ւ  Մ**

**ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Զավարյան փողոցի հ.57/19 շենքի հ.150 հասցեում գտնվող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 01.12.2008թ. հ.2449303 վկայական) գույքը անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) «Զինառ» ՓԲԸ-ին:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## «ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Զավարյան փողոցի հ.57/19 շենքի հ.150 հասցեում գտնվող 466.9քմ մակերեսով գույքը անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) «Զինաո» ՓԲԸ-ին:

Երքաղխորհրդի գործկոմի 1976 թվականի հ.13/29 որոշման համաձայն՝ Մյասնիկյանի շրջանի Հանրապետական մարզադաշտի թաղամասի հ.8/10 շենքի 1-16 Ա-Գ առանցքների միջև առաջին հարկում գտնվող 520քմ մակերեսով տարածքը տրամադրվել է Երևանի կայազորին: Երքաղխորհրդի գործկոմի բնակարանային տնտեսության վարչության կողմից տրամադրվել է հ.2402 օրդերը և այդ տարածքը 2004թ.-ից օգտագործվում է որպես կենցաղ սպասարկման կոմբինատ՝ «Զինաո» ՓԲԸ-ի կողմից:

ՀՀ կառավարության 12.02.2004թ. հ.215-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 13.03.1997թ. որոշման մեջ կատարվել է լրացում և և քննարկվող տարածքը փոխանցվել է Կենտրոն թաղային համայնքին և Կենտրոն թաղային համայնքի 01.07.2008թ հ.23/17-734 գրության հիման վրա Զավարյան փողոցի հ.57/19 հասցեում գտնվող հ.150 շինությունը ստացել է իրավունքի պետական գրանցում (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 01.12.2008թ. հ.2449303 վկայական) Կենտրոն թաղապետարանի անվամբ, իսկ 20.12.2013 թվականին այն վերագրանցվել է Երևան համայնքի անվամբ:

Ներկայումս, նկատի ունենալով, որ քննարկվող 466.9քմ մակերեսով գույքը օգտագործվում է «Զինաո» ՓԲԸ կողմից և Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի տնօրինումը վերապահված է Երևան քաղաքի ավագանուն, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու խմբակցություններից բարձրացված հարցի վերաբերյալ ներկայացվել են դրական դիրքորոշումներ, անհրաժեշտություն է առաջացել Երևան

քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը անհատույց սեփականության իրավունքով օտարելու (նվիրելու) ընկերությանը՝ Երևան քաղաքի ավագանու որոշումը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**